№ 73 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 7 ԱՊՐԻԼԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 7 ԱՊՐԻԼԻ № 73

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ, ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)

Ապրիլի 1-ից մինչեւ տարվայ վերջը 8 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Աւագ Ասրիեան ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԸ իր որդի Հայկի հետ միասին հոգեկան խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր Թանգագին և անմոռաց կնոջ, իսկ երկրորդն իր սիրելի մօր՝

ՆԻՆԱ ԱՐՏԷՄԻԵՎՆԱ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԻ

յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ Պետերբուրգում։ Հանգուցեալի մարմինը կը բերվի Թիֆլիսի երկաթուղային կայարանը այսօր, ապրիլ 7-ին, ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 7-ին, որտեղից յուղարկաւորութեան հանդէսը կը դիմէ Թանգոյեան եկեղեցին, իսկ այդտեղից, պատարագից յետոյ՝ Վերայի հայոց գերեզմանատունը։

337. 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

„ԱՐՕՐ"

ամսագրի №№ 2-ի և 3-ի (փետրվար և մարտ)

1) Մի երեկոյթի պատմութիւն	Սուրէնի
2) Orchideae	Կարինէի
3) *** Ոսկի գարուն (ոտան.)	Ս. Յովհաննիսեանի
4) Օտար երգիչներ, Ռ. Բեօրնսից (ոտան.)	Դ. Նորեկի
5) » » (Սկիտալեցից) »	» »
6) Շեփորուկ, Եւգ. Չիրիկովից	Թարգ. Լ. Դանիէլեանի
7) Բանտի խոնաւ յարկը (պատմուածք Ժան Ռիշպէնի)	» Վ. Մանուէլեանի
8) Իմ տապանագիրը (Պուշկինից)	» Ա. Էֆրիկեանի
9) Կարա-Օղլու, վէպ Բրչինի	Մ. Ցոլակի
10) Խոստովանութիւնը, Լ. Ն. Տոլստոյի	Թ. Սուրխաթեանի
11) Օսմանեան հայերի ազգային սահմանադրութիւնը	Սարուխանեանի
12) Ճորտերի ազատագրութեան յիսնամեակը (24 պատկերով)	(Գ. Չ. (Հ. Ս.
13) Մարդը, նրա ծագումը եւ սկզբնական հայրենիքը	Ռ. Գաբ.-եանի
14) Լեզուների զարգացումը	Ա. Ղուլեանի
15) Հայկական կեանք	Շաւարշի
16) Ռուսական պարբերական մամուլը	Սուրխաթեանի
17) Մատենագրութիւն	
18) Յաւելուած. «Իննսուն երեքը», մեծ վէպ Վ. Հիւգոյի,	Թարգմ. Ս. Սաֆարեանի

(առ.) 2—1

Ձրի եւ Էժանագին Ճաշարանների Ընկերութիւնը

անցեալ տարիների օրինակով կազմելով Քրիստոսի Յարութեան ճրագալոյցի երեկոյեան Թաթախումն Թիֆլիս քաղաքի աղքատների և նրանց երեխաների համար, հաւատացած է, որ Թիֆլիսի կարեկից հասարակութիւնը չի մերժի նուիրել պաշարեղէն և դրամ ըստ իր կարողութեան։ Ամէն մի նուիրված կոպէկը Թանգ է։ Նա հնարաւորութիւն է տալիս աղքատին յիշել, որ իր համար էլ Զատիկ է։ Նուէրներն ընդունվում են Ընկերութեան ճաշարանում—Արմեանսկի տուպիկ սեփ. տ., և Ընկերութեան նախագահ տ. Ե. Աւթանդիլեանի մօտ՝ Գրիբոեդովսկայա № 26.

ԱՂԲԻՒՐԻ, ԱՌՈՂՋԱՊԱՀԻ, ՏԱՐԱԶԻ խմբագրութիւնը, ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԸ և ՄԱՄՈՒԼԻ ԲԻՒՐՕՆ

ՏԵՂԱՓՈԽՎԵՑԻՆ

ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԷԿՏԻ ՎՐԱ, տուն № 41 (Ցիրկի դիմաց), վերին յարկ։
առ. 30. 3—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը

յայտնելով, որ առաջիկայ Զատկական տօների առիթով շնորհակալութեամբ ընդունում է աղքատների համար նուէրներ դրամով, մթերքներով և շորով, ամեն օր ժամը 9-ից մինչև 2-ը, 5-ից մինչև 7-ը Ընկ. գրասենեակում (Абасъ-Абадская площадь № 7, с. д.), խոնարհաբար խնդրում է բարեսիրտ անձնաւորութիւններին օգնութեան հասնել այդ Թշուառներին։

Ընդունվում են նաև նուէրներ տօների փոխայցելութիւնների տեղ։

Գօլօվինսկի պրօսպէկտ, 11 ապրիլ, 1911.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Բոլոր երկիրների մասնագէտ ըմբիշների

Վարչութիւնը հրաւիրել է յայտնի ըմբիշների—Պետերբուրգից, Մոսկվայից, Պարիզից, Բեռլինից, Անտվերպէնից, Վիէննայից, Պրագայից, Ամստերդամից, Համբուրգից և Լոնդոնից։ Անուանացուցակը կը յայտարարվի այս օրերս։ Ըմբշամարտը ղեկավարելու համար հրաւիրված է Եւրոպայում յայտնի՝ ըմբշամարտութեան պրոֆեսոր Իվան Վլադիմիրովիչ Լեբեդևը (քեռի Վանիա)։

(ш.о.) առ. Մասնակցողների ցուցակագրութիւնը շարունակվում է։ 335. 2–2

Adresse Télégraphique SANITAS
Адресъ телеграммъ САНИТАСЪ Тифлисъ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԻ
ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

ԱՄԵՆԱԼԱՒ ԸՆԾԱՆԵՐԻ
ՄԵԾԱՔԱՆԱԿ ԸՆՏՐՈՒԱԾՔ
ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Ձուեր՝ անուշաբոյր ջրերով
ԲԱԶՄԱԹԻՒ ՆՈՐՈՅԹՆԵՐ:

(Կ. Հ.) 324. 2—2

Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի Վարչութիւնը

յայտարարում է, որ հանգուցեալ ԱՒԵՏԻՔ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ կտակով պիտի ուղարկվեն երկու հոգի «հայ լուսաւորչական տղայք բարձրագոյն դպրոցներ կատարելագործվելու համար» արտասահման կամ Ռուսաստան։

ա) Ցանկացողները պէտք է աւարտած լինեն Էջմիածնի Գէորգեան հոգևոր ճեմարանը կամ միջնակարգ դպրոցները։

բ) Պէտք է խնդրի հետ ներկայացնեն իրանց աւարտման վկայականի հաստատված պատճէնը և տպագրված աշխատութիւնները, եթէ ունեն։

գ) Ճեմարանի Մանկավարժական Խորհուրդը նախապատւութիւն կը տայ՝ բանասիրական (լեզուագիտութեան ու գրականութեան), մանկավարժական, փիլիսոփայական, պետական (հասարակական), մաթեմատիկական և բնական գիտութիւններին։

դ) Արտասահմանի համար որոշված է տալ տարեկան 700 րուբլի, իսկ Ռուսաստանի համար 600 րուբլի։

ե) Մինչև առաջիկայ մայիսի 20-ը Ճեմարանի Վարչութեան հասած խնդիրները քննութեան կառնվեն։

Տեսուչ ճեմարանի՝ Բագրատ վարդապետ

(Կ. Հ.) առ. 329. 2—2

ՄԵԾ ՋԲՕՍԱՆՔ

Երեքշաբթի, ապրիլի 12-ին
Արտիստական Ընկ. ամառային շինութեան մէջ (Միքայէլեան պր., № 107)
Յօգուտ
ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

I բաժանմունք.

1) Մալօրուսական խումբ. Ուկրայինեան դրամատ. խումբը կը կատարէ մի քանի նոմերներ սօլօ, խմբովին և պարեր։

2) Ջօկական պարեր և երգեր։

3) Հայկական երգեցիկ խումբը կը կատարէ մի քանի համարներ։

II բաժանմունք.

1) Մալօրուսական խումբը կերգէ «Запорожецъ за Дунаемъ» օպերետտայից։

2) Ջապորոժեան պար «Գօպակ»։

Այգում կը նուագեն երկու երաժշտախումբ—17-րդ Դրագունեան-Նիժեգորոդեան Նորին Մեծութեան գնդի փողհարների խումբը և Կովկասեան Գրենադերեան Արտիլեր. Բրիգադայի երաժշտախումբը։

Ամերիկական բազար, պտի-շվօ, ծաղիկներ և հանրամատչելի բուֆէտ։

Մալօրուսական համերգի սկիզբը երեկոյեան ժամը $8^1/_2$-ին։

Տոմսակների գները. մեծերի համար՝ 30 կ., երեխաների համար՝ 20 կ.։

Զբօսանքի սկիզբը ցերեկվայ ժամը 2-ին։

(Կ. հ) առ. 326. 3—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների Խորհուրդը յայտնում է ի տեղեկութիւն պ. պ. անդամների, որ երկուշաբթի, ապրիլ 18-ին, երեկ. ժ. 9-ին, կը կայանայ

ԵՐԿՐՈՐԴ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

կանդիդատ առաջարկված անձերին բալոտելու համար, նոյնպէս և հաստատելու այն կանոնները, որոնք կազմվել են Աւագների Խորհրդի կողմից՝ Թիֆլիսի Ժողովարանի ստեպենդիատների համար։

(17) 338. 2—1

ДЕШЕВО
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ №7.

(Կ.Հ.Հ.) առ. 283. 50—6

ԲԺԻՇԿ
ՌՈՒԲԷՆ Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ ջղային հիւանդութիւնների
Ընդունելութիւնը (ցերեկվայ ժամը 12—1.
ամեն օր (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կօչուբէևսկայա փող. № 22.
(Ե. Հ. Կ.) առ. 343. 100—1

Առաջիկայ մայիսին լոյս կը տեսնեն

„ՅԱՐՈՒԹԻՒՆ"
ԼԵՎ ՏՈԼՍՏՕՅԻ
Թարգմ. Տիգրան Յովհաննիսեանի
Երկրորդ (ուղղված) հրատարակութիւն

Գինը՝ ճանապարհածախսով՝ 1 ր. 50 կ., առանց ճանապարհածախսի՝ 1 ր. 25 կ., իսկ մինչև մայիսի 1-ը բաժանորդագրվողների համար 1 ր. (ճանապարհածախսով)։

„ԱՌԱՆՑ ԴԱՒԱՆԱՆՔԻ"
Հ. ՍԵՆԿԵՎԻՉԻ
Թարգմ. (լեհերէնից) Տ. Յովհաննիսեանի
Երկրորդ (ուղղված) հրատարակութիւն

Գինը՝ ճանապարհածախսով՝ 1 ր. 50 կ., առանց ճանապարհածախսի՝ 1 ր. 25 կ., իսկ մինչև մայիսի 1-ը բաժանորդագրվողների համար 1 ր. (ճանապարհածախսով)։

Դիմել Թարգմանչին. Тифлисъ, улица Паскевича, 1. Присяжному повѣренному Тиграну Нерсесовичу Іоаннисянцу. Արտասահմանից՝ Tiflis (Russie), rue Paskevitch, 1, Tigran Ioannissian (avocat).

(առ.) 290. 10—4



Սրուակը 85 կ.
Մեծ սրուակը, մի քանի ամիս բաւականացող, 1 ր. 50 կ.։

(M. 74170/74189) 235. 1—1

ԱՄԱՌԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ.

Այս տարի ամառը մենք կունենանք ամառային գիւղատնտեսական դասընթացքներ։

Նրանք հաստատված կը լինեն Փամբակի Մեծ-Ղարաքիլիսա գիւղում։

Գործի նախաձեռնողն է Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը, որը մշակել է դասընթացքների մանրամասն ծրագիրը։

Նախկին երկու ամառներում էլ այդ Ընկերութիւնը բացել էր դասընթացքներ, բայց աւելի սահմանափակ ծաւալով։

Անցեալ տարիների փորձերը տուեցին նպաստաւոր հետևանքներ, ուստի Ընկերութիւնը վճռել—է այս տարի տալ գործին աւելի կատարեալ կազմակերպութիւն։

Դասընթացքները պէտք է տևեն երկու ամիս, իսկ գործնական պարապմունքներ՝ աւելի երկար ժամանակ։

Իբրև ժամանակաւոր մի կրթական հաստատութիւն՝ երկամսեայ դասընթացքները կարող են համարվել՝ տեւողութեան տեսակէտով՝ բաւարար, որովհետև և արտասահմանում կազմակերպվող ժամանակաւոր դասընթացքները աւելի մեծ տեւողութիւն չեն ունենում և լինում են 2—4—6 շաբաթեայ և սակաւ դէպքերում երկամսեայ։

Այդ ժամանակամիջոցում կարելի է շատ բան հաղորդել ուսանողին, եթէ դասաւանդութիւնը դրված լինի լուրջ և խելացի հիմքերի վրա, եթէ տեսական և գործնական պարապմունքները զուգակցված լինեն որոշ համակարգութեամբ։

Անցեալ տարիների դասընթացքները ունեցան յաճախողներ մօտ երեսուն անձ՝ ամեն անգամ։ Առաջիկայ տարում՝ հաւանական է, որ այդ թիւը աւելի մեծ լինի։

Դասընթացքների վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ ունկնդիրների մէջ համեմատաբար փոքր տեղ են բռնում հայ դպրոցական ուսուցիչները, մինչդեռ պետական դպրոցների ուսուցիչները գալիս են մեծ թւով և սովորում են աւելի կանոնաւոր կերպով։ Այս վերջիններից մի քանիսը այնքան ուշադիր կերպով լսել և իւրացրել են դասընթացքների աւանդածները, որ նոյն իսկ ձեռնարկել են դպրոցից դուրս հրահանգչական կամ ինստրուկտորական գործունէութեան։

Մենք գիտենք, որ հայ ուսուցչութեան մի մասը զբաղված է ամառները պաշտօն որոնելու հոգսերով և տրամադրութիւն չունի լրացուցիչ գիտելիքների իւրացման գործով հետաքրքրվելու. բայց այդ հանգամանքը երկրորդական դեր է կատարում ընդհանուր երևոյթի բացատրութեան խնդրում։ Հայ դպրոցների ուսուցիչների այն մասը, որ ապահովված է պաշտօնի վերաբերութեամբ, դեռ ևս մեծ պատրաստակամութիւն չէ ցոյց տալիս դէպի նոր դասընթացքները և նոր գիտելիքներ ձեռք բերելը նոյն իսկ մանկավարժական մասնագիտութիւնից։

Եթէ ժողովրդական տնտեսական կեանքը ամեն օր հանդէս է բերում նորանոր հարցեր, եթէ գիւղական մեծամասնութիւնը սկսել է պահանջ զգալ արդիւնաբերական կատարելագործութիւնների, եթէ հերթական է դարձել գիւղատնտեսական գիտելիքների տարածմանը նպաստող ձեռնարկութիւնների հիմնադրութիւնը, անշուշտ, կարևոր է, որ դպրոցական ուսուցիչն էլ իր կողմից հնար եղածին չափ ընդունակ լինէր արձագանք տալ ժողովրդական կարիքին դարման անելուն։

Այսօր մեր երկրի մի տեղում, իսկ վաղը և միւս օր երկրի զանազան կէտերում կը բացվեն նորանոր դասընթացքներ, որոնք ասպարէզ կը գան լրացնելու այն պակասը, որ չէ կարողանում լրացնել դպրոցը։ Եւ ցանկալի է, որ հայ ինտելիգենտ մարդը կարող լինէր օգտվել բոլոր միջոցներից՝ օգտաւէտ լինելու իր ժողովրդին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 ապրիլի

Պետերբուրգ. — Համաձայն ներքին գործերի մինիստրութեան մշակած կանոնների վեց արևմտեան նահանգներում զեմստվօ մտցնելու մասին, կազմակերպչական բնաւորութեան զեմստվային առաջին ժողովները յիշեալ նահանգներում գումարվելու են՝ գաւառականները յուլիսի 23-ի և օգոստոսի 7-ի միջև, նահանգականները՝ օգոստոսի 7-ի և օգոստոսի 20-ի միջև։ Զեմստվային ձայնաւորներ ընտրելու համար սահմանված են կրճատված ժամանակներ. ընտրողական ցուցակների հրատարակութեան համար՝ 4-ի փոխարէն 2 ամիս և 7 օր՝ մինչև ընտրութիւնները, նրանց ուղղելու մասին յայտարարութիւններ ներկայացնելու համար՝ մի ամսի փոխարէն՝ 10 օր՝ ցուցակները հրատարակելու օրից. և ցուցակների վերջնական հրատակութեան համար՝ մի ամսի փոխարէն՝ 2 շաբաթ՝ մինչև ընտրութիւնները։

Ճանապարհներ կառուցանելու վարչութեան պետը ապրիլ 6-ին մեկնում է Կովկաս՝ Սև-ծովի երկաթուղու կառուցման հարցերը պարզելու, Արմաւիր-Տուապսէ գծի կառուցման աշխատանքները դիտելու և Բօրժօմ-Կարս գծի նախագիծը կազմելու գործի դրութեան հետ ծանօթանալու համար։

Բարձրագոյն Թոյլտուութեամբ մինիստրների խորհրդի նախագահը ապրիլի 4-ին կարճ ժամանակով մեկնեց Պետերբուրգից Կուրլեանդիայի նահանգը, վերապահելով իրան գործերի ընդհանուր ղեկավարութիւնը։ Ստատս-սեկրետար Ստոլիպինին ուղեկցում է առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Եաբլօնսկին։

—

Ռիգա.—Առաւօտեան անցաւ ստատս-սեկրետար Ստոլիպինը։

—

Կ. Պօլիս.—Շէյխ-իւլ-իսլամը այս օրերս հրատարակեց մի ֆէթվա, որով թոյլ է տալիս թիւրքաց իշխանութիւններին վաճառել Քերբալայի շիաների սրբատեղում պահվող շիա-ուխտաւորների նուէրները, որոնք գնահատվում են մօտաւորապէս 1 միլիօն թիւրքական լիրա։ Սոտցված դրամով մտադրութիւն կայ կառուցել Թիւրքաց դպրոց և հիւանդանոց։ Այդ վճիռը կապւում են ժողովրդական լուսաւորութեան ներկայ երիտասարդ Թիւրք մինիստրի անցեալ տարի Բաղդադ գնալու հետ։ Ֆէթվան շիաների մէջ առաջ բերեց մեծ դժգոհութիւն։

—

Բէլգրադ.—Պետ. Հեռ. Գործ. Թղթակցի հետ խօսելիս, արտաքին գործերի մինիստր Միլօվանօվիչը, շօշափելով ալբանական ապստամբութիւնը, ասաց. «Սերբիան խիստ չէզոքութիւն է պահպանում Ալբանիայում ներկայիս տիրող ճգնաժամի վերաբերութեամբ, անկեղծօրէն ցանկանալով իր սեփական և բոլոր բալկանեան պետութիւնների շահերի տեսակէտից կարգ ու կանոնի և հանգստութեան շուտափոյթ վերականգնումն։ Ինչ վերաբերում է Չերնոգորիային, Սերբիային յայտնի են այնպիսի փաստեր, որոնք կարող են կասկածի ենթարկել չերնոգորական քաղաքականութեան խաղաղ ձգտումները։ Ցամենայն դէպս Սերբիան կը ցանկանար, որպէսզի նկատի առնվի չերնոգորական կառավարութեան դժուարին կացութիւնը, նաև չերնոգորցի ժողովրդի միանգամայն հասկանալի յուզմունքը»։

—

Փէց.—Բէնիմտէր ցեղը ծեծելով և բոլորովին մերկացնելով շէրիֆի լիազօրներին, որոնք ուղարկված էին բանակցելու, ուղարկեց նրանց յետ։ Ցեբեկով, ցեղը մօտեցաւ քաղաքին և յարձակվեց առաջաւոր զօրախմբերի վրա, սակայն յետ նահանջեց Մախզէնի զօրքերից, թողնելով տեղում մի քանի սպանվածներ։ Մախզէնի զօրքերը կորցրին երկու սպանված և մի քանի վիրաւոր։

—

Բիզէրտ.—Ֆալիէրի գալստեան առիթով կայացաւ հանդիսաւոր ճաշ։ Ֆալիէրը բաժակ առաջարկեց Տունիսի բարգաւաճման համար և բաժակը բարձրացրեց ի պատիւ միապետների, որոնք շնորհաւորեցին իրան իրանց պատերազմական նաւերի միջոցով Բիզէրտի Ջրերում և որոնք դրանով վկայեցին իրանց մեծ համակրանքը առ Ֆրանսիան։

—

(Լրագիրներից)

«Р. Сл.»-ի թղթակիցը հեռագրում է Բագուից. «Քաղաքային դումայի ձայնաւորների վերջացած ընտրութիւններին կռւում էին երեք կուսակցութիւններ՝ ռուս, մահմէդական և հայ-թուրքական բլօկ։ Ագիտացիան թոյլ էր, և հետևանքում ձայները խեղդվեցին։ 96 ձայնաւորների փոխարէն ընտրվեցին միայն 24, որոնցից 14-ը մահմէդականներ են, 8-ը ռուսներ և 2-ը հայեր։ Սևացան աչքի ընկնող հասարակական գործիչներ։ Բոլոր ընտրվածներն էլ առաջադիմականներ են»։

—

Մոսկվայում հաստատվեց «Ռուսաստանի պատմական դէպքերի հետ ծանօթանալու ընկերութիւն», որ նպատակ ունի կազմակերպել պատմական համերգներ և ներկայացումներ ինչպէս հասարակական, այնպէս և կրթական հաստատութիւններում։

Կազմակերպված ընկերութեան գլուխ կանգնած է զօրքերի հրամանատարի կին Պլեվէն։ Մասնակցում են Մոսկվայի քաղաքապետ Ա. Ադրիանով, Ադրիանովա, զօրահրամանատար Պլեվէ, նահանգապետ Ջունկովսկի, քաղաքագլուխ Ն. Գուչկով, Իպպոլիտով-Իվանով, նահանգական պարագլուխ Սամարին, ուսումն. շրջանի հոգաբարձու Տիխոմիրով։

—

Ապրիլի 1-ին աւարտված Պետական Դումայի նստաշրջանը տևեց 74 օր։ Այդ նստաշրջանում ներկայացվեցին 133 կառավարական օրինագծեր. Դուման ընդունեց ընդամենը 139 օրինագծեր և 1911 թ. բիւջէն։ Դումայի անդամները ներկայացրին 19 օրէնսդրական առաջարկութիւններ։ Ապրիլի 1-ին մասնաժողովների քննութեան համար գտնվում էին 63 օրինագծեր։ Մի քանի օրէնսդրական նախագծեր մնում են բոլորովին անշարժ։

—

«Berliner Tageblatt»-ը հաղորդում է, որ Թէհրան է ժամանել Էնզելի-Ղազուին-Թէհրան-Համադան խճուղու վերատեսուչ Պօդգուրսկին՝ մի քանի այլ պաշտօնեաների հետ նրա համար, որպէսզի բանակցութիւններ սկսէ պարսից կառավարութեան հետ Ջուլֆա-Թաւրիզ երկաթուղագծի կոնցեսիայի մասին, որը կտևենայ նաև ուղղի դէպի Թէհրան։

Թերթի ասելով, Ռուսաստանը ներկայիս օգտվում է Անգլիայի և Ֆրանսիայի խոստումներից, որոնք խոստացել են չը մրցել նրա հետ Հիւսիսային Պարսկաստանում։

Նախագծվող երկաթուղագիծը առայժմ կը ծառայէ միայն ռուսական առևտրի շահերի պաշտպանումին, մինչև որ չեն ոչնչացվի հարկերը ոչ-ռուսական ծագում ունեցող ապրանքների վրայից։

—

«Standard»-ին հեռագրում են Բեռլինից, որ Գերմանիայի և Ռուսաստանի մէջև տեղի ունեցող բանակցութիւնները՝ համաձայնութիւն կայացնելու վերաբերմամբ՝ արդէն աւարտված են, որը կազմված է վերջնականապէս և որին պակասում են միայն ստորագրութիւնները։ Ի նկատի ունենալով Սազոնովի հիւանդութիւնը, ստորագրումը յետաձգվում է մինչև վերջինիս ապաքինումը, որպէսզի նա անձամբ դնէ իր ստորագրութիւնը պայմանագրի տակ։

—

Պարիզ.—Երաշխաւորվելով Ռուսաստանի և Անգլիայի համաձայնութեամբ Մարօկկօյում նոր ձեռնարկութիւն սկսելու նկատմամբ, Ֆրանսիան այդ նպատակով բանակցել սկսեց Գերմանիայի հետ։

Եթէ այդ բանակցութիւնները աջող արգասիք տան, ֆրանսիական կառավարութիւնը մտադիր է բանակցել նաև Իտալիայի և Աւստրիայի հետ։

Ի նկատի ունենալով, որ Ֆալիէրի Տունիսում կատարելիք ճանապարհորդութեան ընթացքում նրան կողջունեն անգլիական և իտալական նաւատորմերը, մտադրութիւն կայ նրան ուղեկից անել շատ ազդու նաւատորմիղ, որպիսին Ֆրանսիան երկար ժամանակից ի վեր չէ հանել Միջերկրական ծովի վրա։

—

Լօնդօն.—Խաղաղասիրական համագումարում, որ տեղի ունեցաւ Նիւ-Եօրկում, Կարնէջին յայտնեց, որ նա խորապէս համոզված է, թէ Անգլիայի և Ամերիկայի մէջև պայմանագիր կը կնքվի միջնորդ դատարանների նկատմամբ, որը կը պարփակէ իր մէջ այն բոլոր հարցերը, որոնք կարող են թիւրիմացութիւնների տեղիք տալ։

Կարնէջիի կարծիքով, Ֆրանսիային և Ճապօնիային կը հետևեն Անգլիան և Ամերիկան։ Կարնէջին տեղեկացրեց, որ ինքը նուիրում է կէս միլիօն դոլլար (մօտ 1 միլ. ր.) խաղաղութեան ֆօնդի կազմակերպման համար։

Վերջում ժողովականները երգեցին ազգային հիմնի մի նոր տունը այն մասին, որ սկսվում է նոր դարաշրջան, դարաշրջան խաղաղութեան յաղթանակի՝ արիւնայեղ կոտորածների վրա։

—

Վիեննա.—Լվօվի «Wiok Nowy» թերթը հաղորդում է, որ Գալիցիայում երևան է հանված մի գաղտնի ուսանողական կազմակերպութիւն (Ռուսական Գալիցիայից), որին մասնակցում են նաև միջնակարգ դպրոցների սաներ։

Կազմակերպութեան անդամները մտադրութիւն են ունեցել մարտի 30-ին, Պօտօցկիի սպանութեան օրը, կազմակերպել ցոյց ներկայ փոխարքայ Բօբրժինսկիի դէմ։

Ձերբակալվածների մօտ ի միջի այլոց գտնվել են կոչեր՝ ուղղված ռուս զինուորներին, որոնցով հրաւէր են կարդում չը կրակել ցուցարարների վրա, եթէ իշխանութիւնը նրանց հրամայէ։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 ապրիլի

Տօկիօ.—Կաբինէտի կամաւոր փոփոխութեան մօտալուտ նշան լրագիրները տեսնում են մարկիզ Սայօնջիի կազմած խնճոյքի մէջ ի պատիւ պրեմիեր Կացուրայի և նրա կոլլեգների։ Կիսապաշտօնական «Ջապօն-Թայմսը» գոհունակութեամբ յայտնում է, որ կառավարութեան դաշնակցութիւնը Սենիւկայի կուսակցութեան հետ՝ մի քայլ է դէպի պարլամենտարիզմ։

Մտացածին են այն լուրերը, թէ իբր Ռուսաստանը ճապօնական կառավարութեան առաջարկել է յանձնել Նագասակիում ապրող ռուս նիհիլիստներին։

—

Պէկին.—Այրի թագուհին այսօր առաջին անգամ պալատական սգից յետոյ ընդունեց դիպլոմատիական մարմնի կանանց։

—

Մուկդէն.—Սիբիրի գեներալ-նահանգապետը ճապօնական հիւպատոսին բերանացի համաձայնութիւն յայտնեց բաւարարութիւն տալ հետևեալ պահանջներին. խստագոյնս պատժել բոլոր չինական ոստիկանական պաշտօնեաներին, որոնք մասնակցել են ճապօնացիների վրա տեղի ունեցած յարձակմանը. նկատողութիւն անել ոստիկանապետին. վարձատրել վիրաւորված ճապօնացիներին. կտրականապէս յայտարարել, որ այդպիսի դէպք այլևս չի կրկնվի ապագայում. արտայայտել հիւպատոսին գրաւոր պաշտօնական ներողութիւն։

Կոնֆերենցիայում նախազգուշական միջոցներ կազմակերպելու մասին սկսված վիճաբանութիւնների ժամանակ անգլիացի և չինացի պատգամաւորները ասացին, որ դրանց համարում են քիչ օգտակար թոքերի ժանտախտի դէպքում։ Պրոֆ. Կիտազատոն սաստկապէս չէշտում էր նրանց անհրաժեշտութիւնը։ Նա համոզված է, որ բուբոնի ժանտախտը կը բռնկվի ամառը Մանջուրիայում։ Զօբօլոտնին ապացուցեց, որ նախազգուշական միջոցներ կազմակերպելը Խարբինում տուեց փայլուն հետևանքներ։ Կիտազատօն պաշտպանում է այդ, մասնաւորապէս Դայրէնում ձեռք առնված միջոցների աջողութեան համար։

Դայրէն այցելելիս Կվանտունի իշխանութիւնները հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տուին կոնֆերենցիայի անդամներին։

—

Մուկդէն.—Մեկնեց մի մասնաժողով չինական և ճապօնական իշխանութիւնների ներկայացուցիչներից Կորէա՝ մանջուրական սահմանը ստուգելու համար։

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ՄԵՔՍԻԿԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 ապրիլի

Դուգլաս (Մեքսիկա).—Ագուապրիէտի մօտ տեղի ունեցած ճակատամարտում ապստամբները յետ մղեցին կառավարական զօրքերի առաջին յարձակումը և նոր դաշտային ամրութիւններ շինեցին։ Նրանց կորուստներն աննշան են, կառավարական զօրքերի կորուստները խոշոր են։ Գնդակները թռան ամերիկական մաքսատունը։ Վիրաւորվեցին ամերիկացի երկու զինուորներ։ Մեքսիկայի Դուրանգօ, Կօագուիլա և Զակատէկաս նահանգներում երկաթուղիները քանդված են։ Ցեղափոխութիւնն աստիճանաբար տարածվում է։

—

Վաշինգտօն.—Տաֆտը չը համաձայնեց ստորագրել հրաման՝ հիւսիս-ամերիկական զօրքերի՝ սահմանն անցնելու մասին, վախենալով որ զօրքերի անցնելը կը գայրացնէ Մեքսիկայի ազգաբնակութեանը Մեքսիկայում ապրող հազարաւոր ամերիկացիների դէմ։

—

Դուգլաս.—Ագուապրիէտի մօտ բանակ դրած ապստամբների հրամանատարը անցեալ գիշեր անցաւ սահմանը և անձամբ անձնատուր եղաւ ամերիկական զօրքերի հրամանատարին. ապստամբները պահեցին իրանց բոլոր դիրքերը։

—

Նիւ-Եօրկ. — Դուգլասից հաղորդում են, որ ապստամբները առաւօտեան հեռացել են Ագուապրիէտից։ Կառավարական զօրքերը գրաւել են քաղաքը։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Վան, 14 մարտի

Անցեալ նամակովս գրել էի, որ գարունը մօտենում է ու հայ ժողովրդի շրջաններում կրկին նոր դէպքերի կասկածներ են առաջացել։ Աւելի մեծ սենսացիա առաջ բերեց մի լուր, որ տարաձայնվեց ժողովրդի խաւերում, և որի համաձայն ասվում էր, որ երեք տարի առաջ եղած խուզարկութեան ժամանակ հայերից գրաւված զէնքերը բաժանվել են թիւրքերին, իսկ ըստ այլոց՝ թէ գողացվել են։ Բայց կառավարութիւնը փութաց մի պաշտօնական յայտարարութեամբ հերքել այդ սենսացիոն լուրը և յորդորել ժողովուրդը, որ հաւատ չընծայէ այդպիսի սուտ տարաձայնութիւնների, և աւելացրել էր, որ նոյն գրաւված զէնքերը կառավարութիւնը տալիս է գիւղական պահնորդներին՝ առանց որևէ փոխարինութեան, այլ միայն երաշխաւորութեամբ։

Նախկին Ջարդի ու արիւնի օրերը շատ վատ են ազդել մեզ՝ հայերիս վրա, եթէ մի քանի թիւրքեր, թէկուզ անմեղ նպատակով՝ գիշերային ժողովներ սարքեն կամ իրար ականջին փսփսան, մենք կարծում ենք, որ նրանք իրար մէջ ագիտացիա են մղում և հայերիս ինչ-որ ջարդելու ծրագիրներ են յօրինում։ Եթէ սա պարզ մտավախութիւնից է առաջանում, բայց առանց պատճառի չէ, որովհետև մեզ մորթոտողների դանակները դեռ շատ էլ չեն բթացել. դեռ մի քանի օր առաջ էր, որ, ինչպէս յայտնել էի նախորդ նամակովս, Սամրանի գաւառակում չորս հայերի մորթեցին ու մէկին էլ ծանրապէս վիրաւորեցին։ Իսկ անցեալ տարի Ագիլջեվազ գաւառակում մորթոտված վեց հայերի սպանութեան ոճրով ամբաստանված ու բանտում գտնված 16 քիւրդերից 11-ը անպարտ արձակվեցին մի երկու շաբաթ առաջ, և 5-ը միայն 3—8 տարով բանտարկութեան վճռվեցին, մինչդեռ նախորդ վալի Բեքիր-Սամի բէյը խոստումներ էր շռայլում, որ ոճրագործները կախաղանի վրա են կրելու իրանց պատիժը. մէկին մենակ ի բացակայութեան մահվան պատժի են դատապարտել. բայց նա արդէն մէկ տարի առաջ մեռել էր։ Սա արդէն հեգնութիւն, կատակ չէ միթէ. բայց ոչ զարմանալի, վասնզի երբ է պատահել, որ հայի սպանութեան պատճառով իսլամը խստիւ պատժվելիս լինի։ Սրա համար էլ մեր զգացած մտավախութիւնները զարմանալի չեն և ոչ էլ մեր հարևան ժողովուրդների միջև ջարդ ու թալանի ախորժակներն՝ անսպասելի։

Սենսացիայի մի ուրիշ պատճառն է նահանգիս ներկայ անկերպարան, անգլուխ վիճակը։ Յայտնի է, որ նախորդ վալին անցեալ աշնան Կ. Պօլիս գնաց և էլ չը վերադարձաւ, նշանակվելով վալի Տրապիզօնի նահանգին. նոյնպէս հրաժարվեց Վան գալուց Շամի նախորդ վալին՝ Իսմայիլ Ֆազիլ փաշան, ուստի բաւական ժամանակ է, ինչ վալիի փոխանորդութեան պաշտօն էր վարում նահանգիս դէֆթէրդարը (հաշուակալ), մի անփորձ ու անազդեցիկ երիտասարդ, որին մի երկու շաբաթ առաջ կառավարութեան պաշտօնատան մէջ ապտակեց մի հասարակ ոստիկան, ու փոխանորդն անկարող գտնվեց նրան պատժել տալ, որովհետև ապտակողը պաշտպանվում էր ոստիկանութեան պետից։ Էլ այսպիսի մի պաշտօնակատար, որ իրան իսկ չէ կարող պաշտպանել, ինչպէս երկիրը պիտի պաշտպանէ, եթէ դժբաղդ դէպքեր պատահելիս լինեն։ Երկար ժամանակից ի վեր բացակայում էր նոյնպէս զինուորական գլուխը (հրամանատար), ուստի թէ երկիրը և թէ զօրքը անգլուխ ու անպատասխանատուութեան են ենթարկվել և մի անախորժ պատահականութեան հանդէպ ոչ ոք կայ պատասխանատու։ Այս պարագան լուրջ մտահոգութեան պատճառ էր, և հայոց առաջնորդարանը դիմեց Կ. Պօլիս հեռագրով, խնդրելով դարման։ Վերջում մենակ նշանակվեց վալիի փոխանորդութեան պաշտօնի համար նախորդ կառավարիչ Նազըմ փաշա և, ասում են, շուտով գալիս է զինուորական հրամանատար փաշայի հետ։ Իսկ չենք իմանում, թէ երբ է գալիս մեր առաջնորդ Յովսէփ եպ. Սարաճեան, որ դեռ շատ հեռուն է, Թրէզնօյում, որի անունն էլ յիշվում է պատրիարքութեան թեկնածուների շարքերում։

Մտրակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԸ ՊԷՏՔ Է ՅՈՒՍԱՀԱՏՎԵԼ

—

> «Մենք չափից աւելի ենք հաւատ ընծայում սիստեմներին և շատ քիչ ենք բանի տեղ դնում կենդանի մարդկանց»։
>
> Լորդ Բիկոնսֆիլդ

«Մշակի» № 62-ի մէջ Իգդիրից գաւառական ուսուցչուհի Սաթենիկ Զաքարեանի «Իմ 25-ամեայ յօբելեանը» վերնագրով յօդուածը ամենայն հետաքրքրութեամբ ու ուրախութեամբ սկսեցի կարդալ։ Սկզբում մտածեցի, որ կատարվել է կամ պիտի կատարվի մի հայ ուսուցչուհու յօբելեանը, որը, անշուշտ, կոչ պիտի լինէր մեր սեռի այն անհամարներին, որոնք վերջին ժամանակներում աւարտելով միջնակարգ դպրոցները՝ պատրաստականութիւն ունեն գաւառական ուսուցչուհի լինելու, սակայն կամ գրասենեկային պարապմունքներ են գտնում, կամ առևտրական տներում «կասսիրշա» լինում, կամ էլ բժինկտօն գնելով նօտարների գրասենեակների մի պուճախում նստած դատարանական թղթերի պատճէններ արտագրելով են զբաղվում, ապրուստ ձեռք բերում։ Ուրախացայ, որ ահա ուսուցչուհու պատրաստականութիւն ունեցողները կը տեսնեն, թէ գաւառական հայ ուսուցչուհին էլ է գնահատվում, յարգանքի արժանանում, և իրանք էլ կը նետվեն ասպարէզ, լոյս կը սփռեն գիւղական խաւար և մութ խրճիթների մէջ, ու ժամանակի ընթացքում խաւար միջնոլորտից գիտակից, գրել-կարդալ իմացող սերունդ կունենանք գիւղական շրջանում, և այլ այդպիսի երազներ։

Սակայն որքան զարմացայ, երբ տեսայ, որ յօդուածի վերնագիրը չէ համապատասխանում յօդուածի բովանդակութեանը և ամբողջովին մի արդարացի ծաղր է ընդհանրապէս հայ հասարակութեան, իսկ մասնաւորապէս այն շրջանի հասարակութեան, ուր 25 երկար տարիներ պաշտօնավարել է այն փշոտ ասպարէզում մի հայ կին, որպիսի ասպարէզը հայ դպրոցական շրջապատն է, և այդ կնոջը քսանհինգ տարիներից յետոյ դուրս են շպրտել դպրոցի դռնից և այլն…

Ծաղր է մանաւանդ յարգելի ուսուցչուհուն շրջապատող, նրա հետ 25 տարիներ կողք-կողքի պաշտօնավարող ուսուցիչ ընկերներին և ներկայիս ուսուցչուհիներին։ Ահա թէ որպիսի բովանդակութիւն էր պարունակում ուսուցչուհի Սաթ. Զաքարեանի յօդուածը «Մշակի» № 62-ում։

Այն հայը, որը հետաքրքրվել է մեր դպրոցական կեանքով, նրա համար պարզ պիտի լինի, թէ որպիսի մեծ կարիք է զգացվում գիւղական-գաւառական ուսումնարաններում հայ ուսուցչուհու պաշտօնավարութեան։ Այսօր էլ, երբ գտնվում ենք XX դարի առաջին քառորդում, մեր գաւառական շատ ուսումնարաններում ուսուցչուհիներ չը կան, թէև, ինչպէս ասացի, միջնակարգ դպրոցներից աւարտած հարիւրաւոր օրիորդներ, տիկիններ կան այդ կոչման համար, սակայն դրանք չեն գնում գաւառները, պատճառաբանելով որ «իշու նահատակ պիտի դառնանք», ինչպէս ընկերուհիներիցս շատերից եմ լսել, երբ յորդոր եմ կարդացել նրանց գնալ գաւառները հայ գեղջկուհուն գրել-կարդալ և արհեստ (ձեռագործ) սովորեցնելու։

Այժմ ուսուցչուհի Զաքարեանի 25 տարուայ գործունէութեան հետևանքը գալիս է հաստատելու, որ հայկական միջնոլորտում մշակը իր վարձը չէ ստանում…

Ուսուցչուհի Ս. Զաքարեանը 1886 թ. մտել է ուսուցչական ասպարէզ այն ժամանակ, երբ հայկական շրջաններում ընդհանրապէս, իսկ գաւառներում մասնաւորապէս ուսուցչուհիների սով է եղել, երբ նոյն իսկ նահանգական քաղաքներում ամենահասարակ ուսուցչուհուն իսկ մատներով են ցոյց տուել։

Այսօր ոչ թէ պիտի 1885—86 թ. թ. ուսուցչուհիները դուրս շպրտվէին առանց
լուրջ հակամանկավարժական պատճառների
այլ հասարակութիւնը պարտք պիտի
նրանց յօբելեանները տօնելուց զատ՝
սաթոշակի արժանացնել նրանց։
Այդ է պահանջվում սկզբունքի
ճառող հոգաբարձուներից, թեմական
հուրդից և մանաւանդ տեսուչներից։ Ս
երբ մեր ուսուցչուհիները պիտի
տրված տեսնէին իրանց աւագ-ընկեր
տեսնում են դուրս շպրտված այն հ
կութիւնից, որտեղ իր կեանքի օրեր
լի է մաշել, քայքայել, քան իր ը
կան յարկի տակ, իր զաւակների շ
Ես խօսք չեմ գտնում մխիթարելու 25
րի մանկավարժական-գաւառական մի
տում կեանք, հոգի մաշած, զաւակի վ
մանն օտար երկրում մոռացած յա
ուսուցչուհուն, բացի հոգեբան Ռէսկի
տեսալ խօսքերից. «Հոգեկան կարողութ
ամենաազնիւն ու պատուականը, աւել
և ամենից հազւագիւտը՝ համբերութ
է։ Դա է ամեն տեսակ ուրախութեան
բովի արմատը. յոյսն անգամ դադար
երջանկութիւն լինելուց, երբ նրան
չէ լինում համբերութիւնը»։ Ուրեմն չը
տի յուսահատվել։

տիկ. Սաթենիկ Գարագա

Բագու, 26 մարտի

ՀԱՅՐԱՊԵՏ ԱՂԱՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

«Մշակի» 56-րդ համարում տպված էր հ
գուցեալ Հայրապետ Քալանթարի կարճ կ
սագրութիւնը։ Պէտք է ասած, որ այդ
բունին մի վերին աստիճանի համակր
տիպերից էր, որոնց նմանները, դժբաղ
բար, այժմ չեն երևում մեր կեանքում։ Մ
առաջներում ունեցել ենք նշանաւոր ի
նածին (самородки) տիպեր, որոնք հա
բեռ առանց փոքր ի շատէ կանոնաւոր
ման, շնորհիւ իրանց բնածին ընդունակ
թեան և ինքնակրթութեան հասել են՝
բարձր զարգացման և թէ բարձր պ
նական պաշտօնների։ Բաւական է յ
Ղահրաման աղա Մելիք-Աղամալեանին, Հայ
մաքեանին, որոնք հասել էին՝ նահանգակ
դատարանների օրինակելի նախագահի պա
տօններին, մէկը Երևանում, միւսը Քութ
յիսում, Կալա-բէկ Մելիք-Կարագեօզեան
այժմ կենդանի Մարկոս Դօլուխանեան
Ներսէս-բէկ Ամիրբէկեանին, Համբար
աղա Ջալուռեանին, Մելիք-Մանուչար (
բեկեանին, Աստուածատուր-բէկ Առաքել
նին և այլն, որոնք յայտնի էին իր
բնական խելքով, անվեհեր բնութեամ
արդիւնաւոր գործունէութեամբ, ոմանք
գային ասպարէզում, ոմանք և ծառայ
թեան մէջ։
Այդ տիպին էր պատկանում և Հայր
պետ Քալանթարը։
Ես ծանօթացայ առաջին անգամ հանգ
ցեալի հետ 90-ական թւականներին Ար
գաւառի Ագդաշ գիւղաքաղաքում,
ես այն ժամանակ բժշկական պաշտօն
էի։ Իմ ծանօթութիւնս շատ շուտ եղ
նա եկել էր այցելութիւն ագուլեցի
ծանօթիս հետ։ Իմ առաջին տպաւորութի
ծերունուց շատ մեծ էր. ես ունէի իմ
ռաջ մի վերին աստիճանի համեստ գ
փարական անձնաւորութիւն, որը եկել
այնտեղ գիւղատնտեսութեամբ պարապ
հանգուցեալ Սարգիս-բէկ Կարախանեա
կալուածքում, գաւառի լեռնային շրջան
Սօյուգլու կոչվող հայ գիւղերում։ Հ
գուցեալը՝ ի միջի այլոց՝ ասում էր,
«մեր գիւղական տարրը ցայժմ թողնված
առանց որևիցէ հոգատարութեան. և
լինելով տգէտ և շատ տեղերում սակա
հող՝ չէ կարող ունենի նահապետական
գիւղատնտեսութեամբ իր առօրեայ
բուստը հայթայթել. նա պիտի գաղթի
գից և վերջ ի վերջոյ կորչի։ Հարկաւո
նրա մէջ նոր գիւղատնտեսական հիմու
ներ տարածել, նոր գործիքներ, նոր ձ
բոյսեր և այլն։ Ես երկար ժամանակ
բացել եմ մանկավարժութեամբ. այժմ
րութեան հասակումս կամենում եմ գիւ
տնտեսութեամբ պարապվել և գուցէ
նով կենդանի օրինակ դառնամ մեր
գիւղացոց մէջ մի քանի գիւղատնտես
նորութիւններ մտցնել» և այլն։
Հանգուցեալը ասում էր, որ նա
սիրում գիւղատնտեսութիւնը, և այդ
ժառանգաբար անցել է նրա արժ
զաւակներին, որոնցից մի քանիսն
հեղինակաւոր անուն են վաստակել
Ռուսաստանում։
Ես միանգամայն հիացած էի այդ ծ
նու խօսակցութիւնից, գաղափար
դեռ հոգով երիտասարդական ձգտումներ
որովհետև թէև նա մարմնով արդէն ծ
ցել էր, բայց ոչ հոգով. դժբաղդաբար
բարեկամական մտքի շփումները
չեղան. ծերունին երկար չը մնաց իր
պալով վերցրած կալուածքում, թէև
բերել էր տուել նոր ձևի գործիքներ,
հետև հանգամանքները այնքան էլ
չէին նրա համար։
Հանգուցեալը՝ իրանից անկախ
պատճառներից դրդված՝ թողեց իր
զբաղմունքը և գնաց Բագու։ Այժմ երբ
ղատնտեսական հարցը մեր գիւղացոց
արդէն դառել է կենսական և անյետաձ
մենք մտաբերում ենք Հայրապետ
խօսքերը և ձգտումները, որոնց մասին
սեցինք վերև։
Այո, ճիշդ է գրում «Մշակը» հանգուց
լի մասին, որ նա մի զարմանալի

րելի տեղ էր։ Նա կրթեց բազմաթիւ սերունդ իր համակրելի ամուսնու հետ, բայց ունեցաւ և բազմաթիւ սեփական սերունդ—8 տղայ, որոնք իրանց ծնողների արժանի զաւակներն են հանդիսանում։ Մարդ զարմանում է, թէ ինչպէս այդ համեստ ընտանիքը կարողացել է մեծացնել յիշեալ սերունդը և տալ նրանց համարեա բոլորին՝ բարձր ուսում։ Ակամայ յիշում եմ անգլիացի գրող Էսկիրօջիին, որ իր նշանաւոր գրուածքի մէջ, «Էմի XIX դարի», այս միտքն էր յայտնում. «Թող ամեն մէկս մեզանից իր զաւակներից պիտանի անդամներ պատրաստէ հայրենիքի և մարդկութեան համար, այն ժամանակ շատ չարիքների առաջն առնուած կը լինի»։ Հայրապետ ամօրը աջողվել է կատարել այդ ազգային պահանջը, տալով պիտանի անդամներ վերջինիս։

Հանգիստ ոսկերացդ, համակրելի ծերունի. դու կատարել ես քո պարտքը լիովին՝ թէ իբրև հայր, թէ իբրև հայ և թէ իբրև հասարակական պիտանի անդամ։

Բժ. Բ. Աղասարեան

ԱՒԵՏԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆ

Առաջ քան աստղն իջնէր մեր երկնակամարից, արժէր, որ գէթ մի քանի խօսք ասվէր նրա մասին։ Բայց լատինական առածն ասում է՝ «հանգուցեալի մասին կամ լաւ, կամ ոչինչ»։ Իսկ ես կասեմ՝ հանգուցեալի մասին զուտ ճշմարտութիւն։ Գոնէ մի անգամ անձի մասին ասված լինի զուտ ճշմարտութիւն։ Բարեբաղդաբար այս անգամ ճշմարտութիւնը վիրաւորիչ չը պէտք լինի ոչ հանգուցեալի յիշատակին և ոչ նրա սիրելիներին, հարազատներին։

Աւետիս Վարդապետեանին ես ճանաչել եմ միայն և նեղ մի շրջանում, մի մթնոլորտում՝ Կովկ. Հայոց Բար. Ընկերութեան ընդհանուր ժողովներում, որից դուրս ես նրա հետ և ոչ մի այլ շրջանում չեմ տեսնվել, չեմ շփվել. երբեմնակի միայն փողոցումն անցնելիս հանդիպել ենք միմեանց և փոխադարձ յարգանօք բարև տուել և բարև առել։

Բայց չը նայելով դրան, Աւետիս Վարդապետեանը ինձ համար թւում է, թէ մի ամենամերձ արենակից հարազատ ազգական է, սրտիս սիրելի մի ազգական, և ամեն անգամ ես նրան տեսնելիս՝ զգացել եմ հոգեկան ուրախութիւն։ Երեսուն տարիներ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը ունեցել է իր ընդհանուր ժողովները զանազան շէնքերում, բայց մեծ մասին քաղաքային տան դահլիճում, և ամեն անգամ, գրեթէ անփոփոխ, երբ ես մտել եմ դահլիճը՝ տեսել եմ Ընկերութեան վաղեմի բարեկամին նստած առաջին նստարանի վրա, և շատ տարիներ կատարել է Ընկերութեան վերաստուգող յանձնաժողովի ծանր և պատասխանատու պաշտօնը։

Հետաքրքրական է վերլուծել հոգեբանօրէն, թէ ինչ էր կամենում Աւետիսը՝ տասնեակ տարիներ յաճախելով Բ. Ընկ. ժողովները և անփոփոխ անդամակցելով նրան։ Հայ մարդը կարող է շատ գործերով զբաղված լինել իր առօրեայ կեանքում, լինի այդ ընտանեկան գործեր, տնտեսական, կամ իր արհեստին վերաբերեալ եայլն և այլն նոյն կարգի գործերով։ Բայց երբ նա կամենում է մասնակցել հասարակական գործերին, և այն՝ բազմակողմանի կերպով, նա այնտեղ գրեթէ ընտրութիւն չունի, քան եթէ գալ մասնակցել Բարեգործական Ընկերութեան գործունէութեանը։ Կարելի է հակաճառել այս որոշմանը, բայց դա կը լինի բռնազբօսիկ մի հակաճառութիւն։ Եւ այդ տեսակէտից դուք նայեցէք, դիցուք, մեր այս քաղաքին, որը պարծենում է իր հայաշատութեամբ՝ հաշւելով իր մէջ աւելի քան 100,000 հոգի, որոնցից իւրաքանչիւր հազար հոգին մի հատիկ մարդ անգամ չէ ուղարկում Բարեգործ. Ընկերութեան ընդհանուր ժողովին։

Ահա թէ ինչու է գնահատելի դառնում մեր աչքին ամեն մի անհատ, որ գալիս է Բար. Ընկերութեան ընդհանուր ժողովին քաւութեան նոխազ հանդիսանալու ամբողջ Թիֆլիս քաղաքի հայութեան համար, բայց որչափ ևս առաւել նա գնահատելի է դառնում, երբ նա յընթացս 30 տարիների, միշտ և անփոփոխ անդամ է գրվում Ընկերութեանը և գալիս է ժողովներին՝ ներգործական կերպով իր քաղաքացիական պարտքը կատարելու։

Աւաղ, փոքր է և սահմանափակ այդպիսիների թիւը, և դրանց մէջ ամենաառաջին տեղերից մինը ամենայն իրաւամբ պատկանում է մեր նորոգ հանգուցեալ սիրելի Աւետիս Վարդապետեանցին։

Այս բոլորը, ինչ որ մենք ասել ենք, ի հարկէ գիտակցում էր նա. նա սիրել էր իր հայրենիքը և կամենում էր իր [illegible] օգտակար լինել նրան. ապացոյց, որ թողնելով այս աշխարհը նա իր ամբողջ կարողութեան մի-երրորդ մասը կտակել է նոյն Բար. Ընկերութեանը, որի մէջ էր կենտրոնացած տեսել իր ազգային համահայրենակցական կապը։ Ուստի Աւետիսը համարել է Ընկերութիւնը իր երեք ժառանգներից մինը։

Որպիսի հոգու և բնաւորութեան տէր էր հանդիսանում Աւետիս Վարդապետեանը ժողովներում։ Նախ ասենք, որ ժողովներում աւելի քան այլուր երևան են գալիս մարդու բնաւորութեան բնորոշ գծերը, մանաւանդ այնպիսիների համար, որոնք, ինչպէս Աւետիսն էր, անկեղծաբար նուիրված են լինում հիմնարկութեան շահերին և յաճախում են ժողովները անընդհատ և պարբերաբար։ Հասարակական գործը նոյն չափով, եթէ ոչ աւելի ևս ուժգին կերպով, որպէս և սեփական, անձնական գործերը շահագրգռում են մարդու և ալեկոծում նրա սիրտը և հոգին, շարժում են նրա կրքերը, վիճաբանութեան բռնեցնում իր դիմախօսների հետ, արտայայտել տալիս իր հաւատամքը այս-ինչ կամ այն-ինչ հարցերում... և այսպիսով՝ կենդանի և ցայտուն կերպով փռում դիտողի առաջ նրա հոգու և մտքի խորքերը։

Արդ՝ Աւետիսը, ինչպէս ես համոզվեցի յընթացս երեք տասնեակ տարիների, սիրում էր հասարակական գործը, սիրում էր Բարեգործական Ընկերութիւնը անկեղծ սիրով և իր ազնիւ հոգու բուռն զօրութեամբ. նա, երբ հարկը պահանջում էր, ասում էր իր հեղինակաւոր խօսքը, գլխաւորապէս հաշւարանական շրջաններում, ասում էր հանդարտ, հանգիստ, հանգամանօրէն և միշտ ոգևորված և անկեղծութեան շեշտով ու դրոշմով, վիճում էր, ընդդիմախօսում միշտ կորրեկտ ոճերով և բարեկիրթ սահմաններում. և երբ պաշտօնի էր կոչվում ժողովի կողմից, նա սիրով յանձն էր առնում և իրան յանձնված դժուարին գործը կատարում հմտօրէն և ամենայն բարեխղճութեամբ։

Նա հեզ էր և համեստ և վերաբերվում էր անհատներին ամենայն արդարութեամբ և արդար գնահատութեամբ։

Ինչ որ Աւետիսը երեսուն տարի ժողովներում էր, նոյնը անպատճառ նա կը լինէր և ժողովից դուրս կեանքի մէջ։

Այս ազնիւ և առաքինի տիպերը անցնում են անդառնալի... աւա՜ղ։

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Օրվայ Նորութիւններ Սղնախում

Սղնախ, 1 ապրիլ

Շնորհիւ նոր հաշտարար դատաւոր Սուլեանի եռանդուն ջանքերին, վերակազմվեց Սղնախում Կ. Հ. Բ. Ընկ. տեղական կազմալուծված ճիւղը։ Նախագահ է ընտրված Սուլեան։ Անդամների թիւը հասնում է 50-ի։ Յոյս ունենք, որ այս ճիւղն այսուհետև կը գործէ կանոնաւոր, ազատվելով իր «երբեմն և տատանման» վիճակից։

Մեզ մօտ նոյնպէս գարունն ուշ սկսվեց։

Անցեալներս հաղորդել էինք, որ մոմապահստը տրվեց կապալով տարեկան 500 րուբլով։ Պայմանի ժամանակը լրացած լինելով մեր գործակալը յորդորում է ժողովրդին կառավարել մոմապահստը տնտեսական եղանակով, որովհետև այդ ձևով աւելի օգուտ կը ստացվի։ Գործակալի կարծիքը միանգամայն ճշմարիտ է։ Շատ ցաւալի կը լինի, որ մեր խեղճ քաղաքում չը գտնվեն երկու մարդ, որոնք ձրիաբար ծախեն մոմ, ինչպէս անցեալում։

Հանգուցեալ Սրապիոն աւ.-ք. Տէր-Յովհաննիսեանի տեղը չեն ուզում նոր քահանայ բերել, այլ նրա ծուխը բաժանելու են ս. Կարապետի երեք քահանաների մէջ։ Դա միանգամայն գովելի է։ N. N.

ՏԱՒԱՐԻ ԺԱՆՏԱԽՏԸ

Նոր-Բայազէտ, 1 ապրիլ

Հազիւ էր անցել չորս ամիս այն օրերից, երբ տաւարացաւը վերջացել էր մեր շրջանում։ Բայց դժբաղդաբար նա երևաց մեր հարևան Ղուլալի գիւղում մարտի 24-ին, մի ժամանակ, երբ հողագործ տարրը շուտով սկսելու է իր դաշտային աշխատանքը։ Տաւարի ժանտախտը մուտք է գործել Ղուլալիում Երևանի կամ Արանի կողմերից, որտեղ անասուններ էին տրված ձմեռը կերակրելու համար։ Քշելով այդ անասունները դէպի Ղուլալի գիւղը՝ հիւանդութեան դէպքեր են երևում յիշեալ գիւղում, ուր մի եզ ընկնելուց յետոյ յայտնում են անասնաբոյժին և տեղական ոստիկանութեանը, որ, իսկոյն կտրելով հաղորդակցութիւնը թէ շրջակայ գիւղերի և թէ Նոր-Բայազէտի հետ, հեռագրում է դեղեր բերելու և մեծ թւով անասնաբոյժներ գալու համար Երևանից։

Այժմ ամբողջ անասնաբուժական կազմը զբաղված է թէ Ղուլալի գիւղի անասունները պատուաստելով և թէ քաղաքի ու շրջակայ մի քանի գիւղերի անասունները քննութեան ենթարկելով՝ հիւանդութիւնը իր սկզբնական կազմի մէջ խեղդելու նպատակով։ Բարեբաղդաբար մինչև օրս (6—7 օր է) թէ այստեղ և թէ հարևան միւս գիւղերում (բացի Ղուլալիից) ոչ մի հիւանդ տաւար չէ գտնվել։

Թէ որքան զգալի են արդէն տաւարի ժանտախտի հետևանքները մեր գաւառական հողագործ չքաւոր դասակարգի համար, դրա մասին անգամ աւելորդ է խօսք ասել։ Բաւական է յիշել միայն այն, որ նրա ընկնող լծկանները այժմ արդէն հատը 100—150 րուբլի արժեն. երբ, Աստուած մի արասցէ, մի քանիսը սատկում են մի ընտանիքում, այլ ևս այդ ընտանիքը յաւիտեան չէ կարող ոտքի կանգնել և իր տնտեսութիւնը կազմակերպել։ Այս ընկած անասունների տէրը մասամբ վարձատրվում է կառավարութեան կողմից, բայց այդ վարձատրութիւնը մի շատ չնչին գումար է, որը բաւական չէ տուժող ընտանիքի վէրքը դարմանելու։

Ցաւանք, որ Ղուլալի գիւղի ժանտախտը, որը քանի դեռ մեծ ծաւալ չէ ստացել, ձեռնհաս մարդիկ—անասնաբուժական վերահսկիչները—կարող կը լինեն չէզոքացնել և իր սաղմում խեղդել, ազատելով հողագործների սիրելի և թանգագին լծկաններն ու կթի կովերը... Յիշենք, որ այդ նպատակով տեղական ոստիկանութիւնը ձեռք է առել ամենախիստ միջոցներ։ Գ. Սինանեան

Յ. Գ.—Դեռ նամակս չը ծրարած լուր ստացայ, որ կարանտինը, 8 օր տևելուց յետոյ, վերացվեց Նոր-Բայազէտի շրջակայքից, մնալով Ղուլալի և միւս գիւղերի շրջանում։ Նոյնը

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Շատ ճիշդ է նկատել դօկտոր Բաղդ. «Եթէ Էջմիածնի Աբէկեան ախոռը երբէք մաքրվելու հնարաւորութիւն ունի, այն մաքրողներից մինը, գուցէ ամենից աջողը, Բագրատ Վարդապետեանն է»։ Եւ իրաւ, եթէ կայ մէկը, որ հանգուցեալ Իզմիրլեանից յետոյ կարող է արժանաւորապէս տանել կաթողիկոսական ծանր պաշտօնը և բաւարարութիւն տալ այն բոլոր իղձերին, որ հայ ժողովուրդը սպասում էր հանգուցեալ Իզմիրլեանից և մի անգամ ընդ միշտ վերջ տալ այն քաօսային դրութեանը, որի մէջ գտնվում են Էջմիածինը և մեր կրթական ու այլ հաստատութիւնները,—այդ միայն և միայն Բագրատ վարդապետ Վարդապետեանն է։ Մեզ, ռուսահայերիս, կարիք չը կայ ուրիշ տեղ փնտռելու մեր ապագայ կաթողիկոսացուին, նա մեզ մօտ է։ Բագրատ վարդապետը անցել է յայտնի շկոլա. նա մարզվել է Աբիստակէս Սեդրակեանի մարզարանում. սա մեծ պլիւս է։

Մօտ 20 տարի այստեղ՝ Ռուսաստանում և Պարսկաստանում գործել է լուռ, անդուլ և շիտակ. երբէք չէ թմբկահարել իր մասին, չէ ձգտել վարդապետական լանջախաչերի և եպիսկոպոսական պատճէններին։ Գիտէ բարձր պահել հոգևորականի կոչումը։ Ամեն հովերի չէ ենթարկվում։ Սրանք առաւելութիւններ են, որոնցից զուրկ են մեր միւս դիպլօմատները։ Մենք Բագրատից կունենանք երկրորդ Սեդրակեան, վերջինիս դրական յատկութիւններով—հեռատեսութիւն, լրջութիւն, տակտ, վարչական ձիրք և անշահասիրութիւն, աւելացրէք դրանց վրայ՝ սպառիչ ծանօթութիւն ռուսական քաղաքականութեանը, կեանքին և օրէնքին, ինչպէս և Էջմիածնին։

Մնում է ցանկալ, որ մամուլը առաջ տանէ երիտասարդ և գործի մարդու—Բագրատ վարդապետի—թեկնածութիւնը և ծանօթացնի թիւրքահայերին սրա գործունէութեանը։ Գ.

Կիսլովոդսկ

Կաթողիկոսական հարցը այս անգամ այնպիսի խմոր է դարձել, որ շատ ջուր է վերցնելու։

[illegible], խաղուն գլուխը աչքի առաջ ունենալով հայոց կաթողիկոսի միասին՝ կը խոստովանէ, որ ներկայ մեր բարձրաստիճան վեղարաւորների մէջ չը կան կաթողիկոսացու անձինք, այլ պէտք է որոնել վարդապետների, քահանաների, աւելի շուտ՝ աշխարհականների մէջ։

Միթէ բարձրաստիճան այդ հոգևորականները աշխարհական չեն եղել սարկաւագութիւնից չեն սկսել բարձրանալ։ Ո՞վ է իր մօրից եպիսկոպոս ծնվել։

Ամեն մի օրէնք բղխում է ժամանակի ոգուց. նա պէտք է ծառայէ իր բուն նպատակին։

Միթէ կառավարութեան համար նոյնը չէ՝ հայոց ազգը իր համար կաթողիկոս կընտրէ հոգևորականների միջից թէ աշխարհականների։ Ընտրված աշխարհականը մի քանի օրվայ մէջ կարող է ստանալ մինչև եպիսկոպոսական աստիճանը։ Դա ամենևին հակառակ չէ ո՛չ հայոց եկեղեցու օրէնքներին և ոչ էլ պետական օրէնքներին։

Հայոց ազգին հարկաւոր է կաթողիկոս. նա այս անգամ ստիպված է ընտրել ո՛չ թէ վեղարաւորների միջից, այլ բուն ժողովրդի միջից՝ աշխարհականներից։

Սա իր անկապտելի իրաւունքն է։

Ես գիտեմ մի քահանայ, որ Խալիպեան դպրոցը աւարտելուց յետոյ՝ իր ուսումը շարունակել է Ֆրանսիայում։ Նա տիրապետում է հայոց, ռուսաց և ֆրանսիացոց լեզուներին, այժմ էլ սովորում է անգլիերէն։ Այդ քահանան 50 տարեկան է, առողջակազմ, եռանդոտ ու գործելու ընդունակութեամբ օժտված։ Հիանալի հռետոր է, բարեկիրթ ու ազդեցութիւն թողնող։

Ես այդ քահանային Ռուսաստանի բոլոր հոգևորականներից բարձր եմ դասում։ Դա Խարկովի հայոց քահանան է, իր շինարար գործունէութեամբ յայտնի, իր գիտութեամբ ու զարգացմամբ մրցող, իր անբասիր կեանքով հռչակված։ Այդ քահանան թեմական տեսուչ է եղել Երևանի հայոց դպրոցների, Շուշու թեմական դպրոցի։ Արմատապէս ուսումնասիրած է Էջմիածնի միաբանութիւնը, հայ ժողովրդի կարիքները, հայ եկեղեցու վերածնութեան խնդիրը։

Նա ռամկավարական սկզբունքների պաշտպան է, իսկական բաբախող սիրտ հայոց ազգի և եկեղեցու շահերի համար։

Որ նա կը համաձայնի վանական կեանք մտնել, ապացուցվում է նրանով, որ վերջինս Խրիմեանի օրօք խնդրել էր իրան Ղրիմի ս. Խաչ վանքի վանահայր նշանակել, խոստանալով այդ վանքում բանալ տպարան, հրատարակել թերթ, պահել գիւղատնտեսական դպրոց։ Նորեկ

Չարջոյ

ՍԻՆՈԴԻ ԾԱՆՈՒՑՈՂԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Այս տարվայ փետրվարի 25-ից հրատարակվել են սինօդի այն հրովարտակները, որոնցով Էջմիածնի բարձրագոյն հոգևոր հաստատութիւնը ծանուցանում է Սսի կաթողիկոսին, պատրիարքներին, թեմակալ առաջնորդներին հայոց հայրապետի մահը և հրաւիրում է տալ կատարել թեմական պատգամաւորների ընտրութիւնները և նշանակված ժամանակին գալ Էջմիածին նոր կաթողիկոսի ընտրութիւն կատարելու։

Իմ կարծիքով այս հրովարտակները, իբրև բարձրագոյն դօկումէնտ, պէտք է հարազատ բոլորագրութեամբ տարածվէն համայն հայ ազգի մէջ և կարդացվէն թէ եկեղեցիներում և թէ ընտրական ժողովներում։

Այն ինչ մեր առաջնորդները այդ հրովարտակի իմաստը մի քանի տողով առնում են իրանց շրջաբերական առաջադրութիւնների մէջ և արձակում են իրանց պաշտօնագիրը, որ թէ այն բովանդակութիւնը չունի և թէ այն նշանակութիւնը։

Դրանով թէ ժողովուրդը զրկվում է իր բարձրագոյն հոգևոր իշխանութեան իսկական խօսքը լսելուց և թէ օրինակ ու ճանապարհ է բացվում փոխանորդների ու գործակալների առաջ, որ սրանք էլ իրանց հերթին առաջնորդի գրութեան իմաստն առնեն իրանց առաջադրութիւնների մէջ և իրանց պաշտօնագրերը տարածեն բուն եկեղեցիների մէջ։

Այս ձևը ես գտնում եմ անյարմար և անպատշաճ և ոչ օրինաւոր։ Բարձրագոյն իշխանութեան շրջաբերականները, մանաւանդ խնդրոյ առարկայ հանդիսացածի նման կարևորները, պէտք է նոյնութեամբ և ամբողջութեամբ տարածվեն ու կարդացվեն բուն եկեղեցիների և ընտրական ժողովների մէջ. թէ չէ ինչի՞ նման է դառնում վերջ ի վերջոյ այդպիսի մի առաջնակարգ խնդրի մասին խմբագրված ու հրատարակված հրովարտակը, երբ առաջնորդը համառօտի տայ փոխանորդին, փոխանորդը համառօտի տայ գործակալին, գործակալը համառօտի տայ ծխական քահանային։ Այսպիսով միայն հրովարտակի անունն է լսվում, այլ ոչ ինքը հրովարտակն է իր ամբողջութեամբ երևան գալիս։ Արժէ որ սինօդը այդ մասին կարգադրէր արժանը։

Անկախ սրանից, ես և այն կարծիքին եմ, որ թեմական պատգամաւորի ընտրութիւնը հոկտեմբերին և պատուիրակներինը՝ սեպտեմբերին նշանակելն առաւել նպատակայարմար կը լինէր։

Մեսրոպ ա.-ք. Մելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ «Մշակի» հետևեալ համարը լոյս կը տեսնի Զատիկ օրը։

✦ Զատկական տօների պատճառով այսօրվանից փակվում են պաշտօնական հիմնարկութիւններն ու տեղական բանկերը։

✦ Հանգուցեալ Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայեվիչի կամքի համաձայն նրա դագաղի վրա պսակ դնելու փոխարէն եղան նուիրաբերութիւններ առանձին ստորագրութեամբ, որ տուեց 5,380 ր. 99 կ.։ Կովկասի Փոխարքան այժմ կարգադրել է յիշեալ գումարը վերածել $4^{0}/_{0}$-ին պետական ռենտաների և նրա տոկոսներով Թիֆլիսի 1-ին տղայոց գիմնազիոնում հիմնել թոշակներ հանգուցեալ Մեծ Իշխանի անունով։ Փոխարքայի այդ գեղեցիկ կարգադրութեանը համաձայնեց Մեծ Իշխան Նիկօլայ Միխայլովիչը, որ, բացի դրանից, նուիրեց իր կողմից ևս 2,500 րուբլու ռենտաներ այդ ֆոնդի համար։

✦ Վերադարձաւ Պետերբուրգից Կովկասի Փոխարքայի խորհրդի անդամ գ. խ. Վէյդէնբաումը։

✦ Թիֆլիսի նահանգապետի նախագահութեամբ կայացաւ նահանգական ատեանի նիստը, ուր որոշվեց Թիֆլիս քաղաքը ձայնաւորների առաջիկայ ընտրութիւնների համար բաժանել 11 ընտրողական մասերի։ Այս վճռի մասին զեկուցվեց Կովկասի Փոխարքային։

✦ Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան վարչութիւնը շնորհակալութիւն է յայտնում պատուաւոր քաղաքացի Գրիգոր Գերասիմօվիչ Կուզանեանին, որ ընծայել է զատկական տօնի առիթով տասն և հինգ (15) ր., և Դարիա Սիմօնօվնային, որ նուիրեց երեք (3) րուբլի»։

✦ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Զատկական տօների առիթով վարչութիւնս ստանալով գինեվաճառ պատուաւոր քաղաքացի Գրիգոր Գերասիմօվիչ Կուզանեանի ֆիրմայից 50 ր., յայտնում է իր խորին շնորհակալութիւնը»։

✦ Մեզ խնդրում են յայտնել, որ այսօր, ս. Աւետեաց տօնին, Վանքի մայր եկեղեցում Վրաստանի և Իմերէթի հայոց թեմի ժամանակաւոր կառավարիչ Եփրեմ եպիսկոպոսը իր անդրանիկ ձեռնադրութիւնն է անում, տալով աւագ սարկաւագութեան աստիճան նոյն եկեղեցու ուրարակիր դպիր Նիկողայոս Բալէեանցին։

✦ Թամամշեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը միաձայն որոշել է՝ յարգել Ուսուցչական Միութեան Կ. Վարչութեան յարուցած միջնորդութիւնը և իր խնամքին յանձնված դպրոցական շէնքի սենեակներից երկուսը ամառվայ ընթացքում դնել Ուսուցչական Միութեան տրամադրութեան տակ՝ իբրև բնակարան ծառայեցնելու գաւառի ուսուցիչներից Թիֆլիսում ապրել ցանկացողների համար։

✦ «Ր. Կ.»-ը գրում է, որ Թիֆլիսի ժանդարմական վարչութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ ռոտմիստր Լօմխաշվիլին, լուրերին նայած, փոխադրվում է Պետերբուրգ։

✦ Մուխրանեան կամուրջի բացումը տեղի կունենայ ապրիլի վերջերին։

✦ Յօգուտ Թիֆլիսի Ժողովրդական Համալսարանի Ընկերութեան կազմակերպած ներկայացումը համերգային բաժնով տուեց զուտ վնաս 250 րուբլի։ Այս իսկապէս պատիւ է բերում Թիֆլիսի քաղաքակիրթ հասարակութեան։

✦ Ինժեներ Կօզնօվսկին մի նախագիծ է կազմել երկաթուղի շինելու Թիֆլիսի և Կօջօրի միջև։

✦ Շուտով կը հաստատվի մսի և հացի նոր սակագին։

✦ Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Միսակ Աբէլեանի յոբելեանին մասնակցելու համար Ուսուցչական Միութեան Կ. Վարչութեան կողմից ընտրված է վարչութեան անդամ Գէորգ Ղազարեանը։

✦ Ստացանք Բագւում հրատարակվող մի նոր հանդէսի առաջին համարը, «Կոչ» անունով, որ գրական, հասարակական և տնտեսական երկշաբաթաթերթ է լինելու։ Խմբագիր-հրատարակիչն է Ի. Բ. Միքայէլեան։ Խմբագրական յօդուածի մէջ նոր թերթը յայտնում է, որ «նա ընթանալու է այն շաւղով, որով ընթանում է ժամանակակից քաղաքակիրթ աշխարհի միակ առաջաւոր տարրը՝ արտադրողների դասակարգը»։

✦ Թիֆլիսի դատաստանական պալատի աւագ նախագահ Լազօզան մեկնեց Բագու։

✦ Թիֆլիսի նահանգապետը թոյլ տուեց Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վարչութեան ապրիլի 19-ին ներկայացում կազմակերպել Ընկերութեան ամառային դպրոցի համար Զուբալօվեան Ժողովրդական Տանը։

✦ Արդէն ձեռնարկված է գիւղատնտեսների մասնակցութեամբ կազմելու Կովկ. Գիւղատնտ. Ընկերութեան նախահաշիւը 1912 թւի համար։

✦ Փոխարքայի թոյլտուութեամբ Կովկասի բեմերի վրա կարելի է խաղալ ռուսերէն «Այդպիսի են նրանք բոլորը» 4 գործ. կօմէդիան թարգմ. ֆրանսերէնից։

✦ Թիֆլիսի ոստիկանապետը թոյլատրեց հին զգեստների առևտուր անել այն հրապարակի վրա, որ ընկած է Ներսիսեան և Բուսակյա փողոցների անկիւնում, մինչև Ֆօմինի շաբաթը (ապրիլի 18-ը), իսկ Ֆօմինի շաբաթից՝ ժողովրդական առողջութիւնը պահպանելու համար՝ յիշեալ առևտրի համար առանձին տեղ կը յատկացվի Մուխրանեան կամուրջի մօտ։

✦ Սօֆիա Սուլխանեանը, որ ունի 2 աղջիկ և 2 տղայ, խնդրում է օգնութիւն։ Ապրում է Վախտանգօվսկայա փող. տ. № 8։

✦ Ռ. Կիպիանիին Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է հրատարակել Թիֆլիսում գիտական-տնտեսական և գրական օրաթերթ վրացերէն լեզուով՝ «Ցխօվրէբիս Սաքմէ» (Կեանքի Գործ) անունով։

ՉՔԱՒՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Զատկական տօներին չքաւորներին բաժանելու համար Եսսենտուկիից՝ Արտաշէս Երիբէգեանից—3 րուբլի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 5 ապրիլի

Արդարութիւնը վերականգնելու համար՝ խնդրում եմ տեղ տալ երկտողիս։

Պաշտօնիս հետ կապված շրջագայութեան պատճառով նոր իմացայ, որ «Մշակի» № 62-ում տիկին Սաթենիկ Զաքարեան մի յօդուածով («Իմ 25-ամեայ յոբելեանը» վերտառութեամբ) աշխատում է ցոյց տալ, թէ իբր նրան հեռացրել եմ դպրոցական ասպարէզից։ Այդպէս չէ. այս է ճշմարտութիւնը։

1910 թ. սեպտեմբերի կէսերին տ. Սաթենիկ Զաքարեան պատահեց Երևանում. պաշտօն չունէր, դիմեց ինձ և տեղ խնդրեց։ Նրան յայտնեցի.—նախ, դասատուներ հրաւիրելու իրաւունքը պատկանում է դպրոցական հոգաբարձուներին. երկրորդ, թեմական իշխանութիւնից ինձ յանձնված ծխ. դպրոցների հրահանգում կայ ի միջի այլոց և հետևեալ կէտը՝

«Ծխական դպրոցներում ուսուցչութիւն անել կարող են միջնակարգ դպրոցից ոչ պակաս կրթական պատրաստութիւն ունեցող անձեր։ Այս ընդհանուր կանոնի պահանջից բացառութիւններ կարող են լինել թեմական խորհրդի յատուկ որոշմամբ»։

Այս հիման վրա էլ խորհուրդ եմ տուել տ. Սաթենիկ Զաքարեանին վաղօրօք դիմել թեմական խորհրդին։

Այս է իրողութիւնը և իմ կարճ պատասխանը տիկնոջ երկար ու ձիգ գրութեանը։

Երևանի թեմ. տեսուչ՝

Տիգրան Ռաշմաճեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, Կովկասի Փոխարքան մայիս ամսին մեկնելու է Պետերբուրգ։

✦ Պրոֆ. Նիկ. Մառը գիտութեանց ճեմարանի յանձնարարութեամբ մեկնում է արտասահման՝ արևելեան ձեռագրերի հետ ծանօթանալու համար։

◆ Ռուսաց ներքին գործերի մինիստրութիւնը արդէն ստացաւ էջմիածնի սինօդի ուղարկած յայտագրերը ամենայն հայոց կաթողիկոս ընտրելու մասին, որ նշանակված է այս տարվայ դեկտ. 11-ին։ Այդ յայտագրերը մինիստրութիւնը իր կողմից ուղարկում է Ռուսաստանում գտնվող հայլուսաւորչական թեմերին։

◆ Սալօնիկից ծովային ճանապարհով Ալբանիա ուղարկվեցին նոր 6,000 զինւորներ։

◆ Սօֆիայի լրագիրները լի են սենսացիօն տեղեկութիւններով ալբանական ապստամբութեան մասին, որն առանձին հետաքրքրութիւն է առաջ բերել մակեդօնացի պարագլուխների մէջ

◆ Բերլինում տեղական առևտրականները և հիւրանոցատէրերը բարձրացրին շամպայնի գները։

◆ Վերջնականապէս հաստատվեց, որ Գերմանիան նախազգուշացրեց Ֆրանսիային, որ չէզոքութիւն չի պահի, եթէ Ֆրանսիան խառնվի Մարօկկօյի գործերին։ Ֆրանսիան այլևս զօրքեր չուղարկեց։

◆ Մօսկվայի էլեքտրաքարշը 1910 թ. զուտ օգուտ տուեց 436,000 ր.։

◆ Չինական պետական խնամակալը հաստատեց այն հրամանը, որով սախպողաբար հողեր են գրաւվելու Մօնգօլիայում չինացիներին գաղթեցնելու համար։

◆ Չինական զօրքերին կարգադրվեց յաճախ կատարել վարժութիւններ։ Լուսաւորութեան մինիստրութիւնը պատուիրեց ստորին դպրոցներում մտցնել զինւորական արհեստ։

◆ Երկաթուղային գլխաւոր վարչութիւնը պատուիրեց միշտապէս ախտահանութեան ենթարկել համաճարակների ժամանակ մարդատար գնացքների բոլոր վագօնները։

◆ Պետական Դումային Ժդանօվի նախաձեռնութեամբ մի խումբ պատգամաւորներ առաջարկութիւն ներկայացրին այն մասին, որ հրդեհների դէմ եռանդուն կռիւ պէտք է մղել պետական միջոցներով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

5 ապրիլ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ազով-Դօնեան առևտրական բանկի բաժնետէրերի ընդհանուր ժողովում միաձայն հաստատվեց բանկի 1910 թ. հաշիւը, որ զուտ օգուտ հաշւել է 3,350,378 ր. 57 կ.։ Բոլոր ծախսերը հանած, իւրաքանչիւր բաժնեգնին ընկնում է դիվիդենտ 35 րուբլի։

Մինչև օրս յօգուտ երկրաշարժից վնասվածների ստացվեց 395,085 րուբլի։ Այս գումարից Սեմիրեչիէի զինւորական նահանգապետին ուղարկվել է 102,376 րուբլի։

ՕԴԵՍՍԱ։ Շուտափոյթ օգնութեան կայանի բժիշկները, քննելով աշակերտութեան ինքնասպանութեան դէմ կռւելու միջոցների հարցը, դիմեցին տեղական մամուլին՝ խնդրելով զետեղել ինքնասպանութիւնների մասին լակօնական լուրեր առանց ցոյց տալու ինքնասպանութիւնների եղանակները և չը նկարագրելով թաղման հանդէսը, որովհետև այդպիսիները վնասակար ազդեցութիւն ունեն հոգեկանի վրա։

ԼԻԲԱՎԱ։ Առևտրական նաւահանգստում նաւային բանւորները բանւորական օրը մի ժամով աւելացնելու պատճառով գործադուլ արին։

ՄՕՍԿՎԱ։ Երևան հանվեց կողոպտիչների մի խումբ, որ սիստեմատիկ կերպով ապրանքներ էր գողանում Նիկօլայեվի և Մօսկվայի երկաթուղիներից։ 20 ձերբակալվածների թւում 13-ը երկաթուղային ծառայողներ են։

ԲՈՒԽԱՐԱ։ Խիվայի նոր խանը ռուս իշխանութիւնների աջակցութեամբ ձեռնարկել է ֆինանսական մասի բարենորոգման։

ԿԻԵՎ։ Ձերբակալվեց մինչև 250,000 ր. գրաւական ներկայացնելը ինժեներ Զարվան, որին սենատօր Նէյդգարդտը դատի է կանչում վատնումների համար։

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ։ Եկաւ առևտրի մինիստր, որ դիտեց ջրերի և բալնէօլօգիական հաստատութիւնների վարչութիւնները։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱՒՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւօտեան ժամը 12–1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Յակիա, Սեմեօնօվսկայա փողոց, № 16.
Տելեֆօն № 40.
(ն.ու.կ.) 220. 100—10

ԲԺԻՇԿ

Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11. (երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(օ. մ.) 1179. 100—83

ԲԺԻՇԿ

Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Ականջի, քթի, բկի, հիւանդութիւններ,
Ընդունելութիւնը (առաւօտեան 9—1 ժամը. (երեկոյեան 5—7 ժամը.
Վելեամինօվսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիմնազիայի կողքին։
(օ. մ.) 1227. 100—68

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելեամինօվսկայա փողոց, № 8.
(կ. հ.) 564. 100—97

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր (առաւօտ. ժ. 9—12 (երեկոյեան ժ. 5—7
(ե. հ. կ.) 1254. 100—54

ՖԷԼԴՇԷՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ

Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Կատարում է կաշուէ տակ սրսկումներ, վէրքի փաթաթումն, ղեղերի քսումն, դնում է բանկաներ։ Բժշկութիւն **տղամարդի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ եռազախաբի,** հիմնաւոր բժշկութիւն **տրիպէրի** (սուսանակ), ցոյց է տալով հմուտ մասնագէտ բժիշկների։ Օտարերկրեայ հիւանդներին մանրամասն խորհուրդներ և դեղերգրաւոր կերպով։ (Ուղարկել 3 րուբլի)։ Մասսաժ, էլեքտրականութիւն, բժշկական մարմնամարզութիւն։ Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր։ Ծախվում է իր կազմած **«Տղամ. եւ կանանց գաղտնի հիւանդ. բժշկարան»** նկարներով և րէցէպտներով։ Գինը 50 կօպ., ճանապարհածախս՝ 15 կ.։ Հասցէն. Тифлисъ, Семеновская ул. № 9.
(կ. հ.) 160. 50—12

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ եւ վաճառվում է

„ԳԱՐՈՒՆ“

գրական-գեղարուեստական ալմանախ
Բ. գիրք
Բովանդակութիւն

Շիրվանզադէ—«Արմենուհի», Ալ. Իսահակեան—1) «Անգիր և անյայտ», 2) «Հեծկլտող քամին», 3) «Գիշերը պատեց», 4) «Անյաղթ խալիֆան», Փայլակ—«Թովանք», Արսէն-Երկաթ—«Ձեմ կրնար», Յ. Քիւֆէճեան—«Ինչիկի լիճը», Ս. Բաբեան—«Կըրակն այս գիշեր, Ռ. Անոփեան—«Berceuse», Զիֆթէ-Սարաֆ—«Սպեղանին, Յ. Յակոբեան—«Աշխատանքի երգը», Դ. Դեմիրճեան—«Գիշեր է», Մ. Մանուէլեան—«Հէքիաթ», Հ. Նազարեան—«Սև երգեր», Ռ. Սեւակ—«Ինչպէս երբեմն», Մ. Պարսամեան—«Ոսկին ծարաւը», Ա. Ծիզրանեան—1) «Նորից մի կարօտ», 2) «Հոգիս վայլեց», Հ. Մազմանեան—«Տրտմութեան խոհերից», Մ. Մանուէլեան—«Աշնան ծաղիկը», Ալ. Ծատուրեան—1) «Գեղեցկութեան երգերից», 2) «Սիրավէպ», 3) «Անցիր, ով աղջիկ», 4) Երգն է կանչում», Կ. Միքայէլեան—«Վարդանանց պատերազմը», Վ. Տէրեան—1) «Հատուած», 2) «Ոսկէ հէքիաթ» գրքից, Կ. Միքայէլեան—«Առաջին վիշտ»։

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ։

Վերադիր վճարով՝ 1 ր. 25 կ.—Ա. և Բ. գրքերը միասին՝ 2 ր. 25 կ.։
Դիմել բոլոր գրավաճառներին կամ МОСКВА, Б. Дмитровка, 9, кв. 50. Г. Микаэляну.
(հ.շ.ե.) 339. 5—1

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՏՆԵՐ Գօլօվինսկի պր. վրա, Գրիբօեդօվսկայա, Միխայլօվսկայա, Նիկօլայեվսկայա, Դիդուբէյսկայա և այլ փողոցների վրա։
ԽԱՆՈՒԹՆԵՐ տօնավաճառում (եարմարկա) և Մետեխսկի նրբափողոցում։
ՀԻՒՐԱՆՈՑ Արտաթումանում, սեփ. գետնի վրա։
Բոլոր շինութիւնները քարաշէն են և եկամուտ են բերում։ Դիմել «Օրիանտ» հիւրանոցը № 11, առ. ժ. 9—12-ը։
(օ.մ.) 309. 9—4

Լոյս տեսաւ
ԳԱՂՏՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԲԺՇԿԱՐԱՆ

նկարներով։ Տղամարդի և կնոջ ծածուկ հիւանդութիւնները, սեռական գործարանները, վարակվելուց ազատ մնալու կանոնները և այլն։ Բազմաթիւ **խորհուրդներ եւ րէցէպտներ**։ Անհրաժեշտ գիրք բոլոր չափահասների համար, մանաւանդ գաւառներում, որտեղ չը կայ մասնագէտ բժիշկներ։ Գինն է 50 կօպ.։ Ճանապարհածախսով 65 կօպ.։ Կազմեց ֆէլդշէր Ա. Եսայեան։ Դիմել Թիֆլիսի հայ գրավաճառներին կամ հեղինակին՝ Թիֆլիս, Семеновская № 9. Գումարով պահանջողները և գրավաճառները զեղջի մասին դիմեն առանձին նամակով։
(ե.հ.կ.) 293. 5—5

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՇՉԱՆՆԵՐԻ ԱՒԱԳԸ

համաձայն Թիֆլիսի պ. նահանգապետի առաջարկութեան, սրանով տեղեկացնում է Թիֆլիս քաղաքի մէշչանների հասարակութեան, որ 1) լիազօրների (դէպուտատների) ընտրութիւնները 1911—1913 թ. թ. համար, թւով 100 հոգի, լիազօրների ընդհանուր ժողովի այս տարվայ մարտի 7-ին կայացրած և նահանգական իշխանութիւնից հաստատված որոշման զօրութեամբ, ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԵՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՎ, այն է՝ ԱՌԱՋԻՆ շրջանի (րայօն) մէջ մտնելու են I, II և III ոստիկանական մասերը, ԵՐԿՐՈՐԴ շրջանի մէջ—IV, V և VI ոստիկ. մասերը, ԵՐՐՈՐԴ շրջանի մէջ—VII, VIII և IX ոստիկ. մասերը, և ՉՈՐՐՈՐԴ շրջանի մէջ—X, XI և XII ոստիկ. մասերը։ Ընդ ամին ընտրվող 100 լիազօրների թիւը դասաւորված է հետևեալ կերպով. I շրջանում ընտրվում են 18 լիազօրներ, II-ում—28 լիազօրներ, III-ում—32 լիազօրներ և IV-ում—22 լիազօրներ։ 2) ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԵՆ Մէշչանների Աւագի նախագահութեամբ, ԱՄԵՆ ՄԻ ՇՐՋԱՆ ԱՌԱՆՁԻՆ, Մէշչանների Վարչութեան շինութեան մէջ (Ելիզավէտինսկայա փող. № 23), ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 10-ին, հետևեալ օրերում.

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻ համար (1, 2 և 3 ոստիկ. մաս.—18 լիազօր) ապրիլի 17-ին։
ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ համար (4, 5 և 6 մաս.—28 լիազօր) ապրիլի 24-ին։
ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ համար (7, 8 և 9 մաս.—32 լիազօր) մայիսի 1-ին։
ՉՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ համար (10, 11 և 12 մաս.—22 լիազօր) մայիսի 8-ին։

Հաղորդելով այդ մասին՝ Մէշչանների Աւագը հրաւիրում է Թիֆլիսի մէշչաններին, որոնք ձայնի իրաւունք ունեն յիշեալ ընտրութիւններին մասնակցելու, ԻՐԱՆՑ ԱՅԺՄԵԱՆ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ, որի համար և ՎԱՂՕՐՕՔ խնդրում է, որ, ըստ կարելոյն, ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ 2 ՕՐ ԱՌԱՋ, ձեռք բերել մուտքի տոմսակ, առանց որի ոչ ոքի չի թոյլատրվի մտնել ընտրութեան դահլիճը։

ՄՈՒՏՔԻ ՑԻՇԵԱԼ ՏՈՄՍԱԿՆԵՐԸ կը տրվեն ՄԷՇՉԱՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ԱՄԵՆ ՕՐ, սկսած ապրիլի 14-ից առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 2-ը, բացի ԿԻՐԱԿԻ և ՏՕՆ ՕՐԵՐԻՑ։

Ընդ ամին մէշչաններին նախազգուշացվում է, որ ընտրութիւններին, ըստ օրէնի, մասնակցել չեն կարող՝ ա) 25 տարեկանից պակաս տարիք ունեցողները, բ) այն անձերը, որոնց իրաւունքները սահմանափակվում են Օրէնսգրքի IX հատ. 582-րդ յօդ. 15-րդ յաւելուածով, հրատարակ. 1899 թ., և գ) այն անձերը, որոնք մինչև այժմ չեն մուծված կամերալնի ցուցակագրքի կամ Մէշչանների Վարչութեան ցուցակի մէջ՝ ընդունված կարգով։
(ա. օ.) 341. 3—1

Բագուի Հայոց Կուլտ. Միութեան Կրթական Բաժնի

ԿԱՆԱՆՑ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով պատիւ ունի յայտնելու որ իր խնամքին յանձնված դպրոցի սպիտակեղէնի բաժնի 1911/12 թ. համար հարկաւոր է մի հմուտ ու փորձված **ՎԱՐԺՈՒՀԻ**։

Ցանկացողները պայմանների մասին թող դիմեն վարչութեան այս հասցէով. Баку' Биржевая ул., д. Цейтлина. С. М. Адамовой.
(հ. կ.) 272. 5—4

Объявленіе

Симъ довожу до свѣдѣнія почтеннѣйшей публики, что мною полученъ большой выборъ **парча** ОТЪ 80 К. ДО 8 Р. ЗА АРШИНЪ, и громадный выборъ церьковной утвари. Дворцовая улица, магазинъ К. Г. ЧИТАЕВА.
(3,7) 6—6



ԴԵՂԱՀԱՏՆԵՐ

CASCARA MIDY

Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ։
Ընդունելութեան չափը. **2 դեղահատ երեկոները,** պառկելուց առաջ։
Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հոգ և փորլուծութիւն։
Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honoré. Парижъ. Ռուսաստանի գլխաւոր դեղավաճառանոցներում։
(8, 18, 28) (M. 305088) 1050. 0—44

ՄՆԱՅՈՒՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ

Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. XXX-ամեակի

«ՏԱՐԱԶԻ» մի փայլուն ալմանախ՝ նուիրված Կովկասի Հայոց Բարեգ
Ընկ., նրա XXX-ամեակի առիթով, լոյս կը տեսնի մայիսի վերջին։ Կը բո
ղակէ ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ իր բոլոր ճիւղերով պ
կերազարդ էութիւնը։

Այս հանդէսը մի ազգագրական-տեղագրական է՝ լինելու պճնազարդված
շուրջ XXX տարվայ ընթացքում գործիչների պատկերներով։

Բոլոր ճիւղերը Կենտրոնի հետ շաղկապված կը լինեն դիւթական լարերով

Հսկայական այս գործի մի մասը կատարվում է արտասահմանում։ Բո
մաբովանդակ յօդուածները հիւսվում են, մեր առաջնակարգ, գործին և
մութեան լաւատեղեակ պերճ գրիչներով ու կընծայաբերվեն հայութեան
լեանի օրը։

Բաժանորդագինը **2** ր., մինչև մայիսի մէկը Կովկ. Հայոց Բարեգործ.
բոլոր անդամների համար (թէ Թիֆլիսի և թէ ճիւղերի) **1** ր. **50** կ.։ Մ
մէկից յետոյ անխտիր ամենքի համար հատը **3** ր.։

Փղոսկրեայ թղթի վրա (սահմանափակ օրինակներ) հատը 25 ր.։
Վերադիր վճարով և պատուէրներ առանց բաժանորդավճարի չեն կատար
Դիմել՝ Тифлисъ, Редакція «ТАРАЗЪ».
(ե.հ.շ.) 30. 20—2

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՔՈՒՐ

ԿՕՆԵԱԿ „ԱՐԱՐԱՏ“

ՅԱՏԿՈՒԹԵԱՄԲ
ՄՐՑՈՒԹԻՒՆԻՑ ԴՈՒՐՍ

Վաճառվում է գաստրօնօմիական ամենալաւ խանու
ներում։ Պահանջներով անմիջապէս դիմել Երևան Ա. Զ
Եղիազարեանին, կամ թէ Թիֆլիսում Գ. Մուղնեարսկին
(ու. կ. ե.) 314. 10—4

ՇՏԱՊԵՑԷՔ

ՋԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

ԳՐԱՄՄՕՖՕՆՆԵՐ

ԵՒ

ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ

ԳՐԱՄՄՕՖՕՆ ԱԿՑ. ԸՆԿ. ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐ. № 9

Միանգամայն կատարելագործված երաժշտական գործիք, որն ունի իր վրա

ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆ ՅԱՅՏՆԻ

ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԴՐՈՇՄԸ „ԳՐՈՂ ՀՐԵՇՏԱԿ“

ԵՐԳՈՒՄ Է
ԽՕՍՈՒՄ Է
ԾԻԾԱՂՈՒՄ Է

Ուրախացնում, զմայլեցնում է բոլորին և զարթեցնում է սէր առ երաժշտութիւնը։

Ստացված են մեծ քանակութեամբ ապպարատներ՝ վերջին կատարելագործութեան հասած կօնստրուկցիայով, և պլաստինկաներ՝ երկրագնդի բոլոր լեզուներով երաժշտագրված։

ԿԱՏԱԼՕԳՆԵՐԸ ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՁՐԻ

(կ. չ. հ.) 315. 4—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.